


ԲԱԺ-ԱՆՈՐԳ-ԱԳ-ԻՆ

Պոլիարից համար
ցարեկան ֆրբ 10
վեցամսեայ " 5
կԱՆԻՍԻԿ

20

ՈՒՆԴԻՍ



ԲԱԺ-ԱՆՈՐԳ-ԱԳ-ԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրբ 12
վեցամսեայ " 6
կԱՆԻՍԻԿ

20

ՈՒՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի նարար օրերը: Ծա-
նոցման տոհմ 10 Սանդիս: Եկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրահարակուած գրութիւնը եւ յարուիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պոլսէ կը գրեն:

«Կառավարութիւնը գիտնալով որ
Վանայ եւ շրջակայից 'ի նպատակ եղած
հանդանակութիւնները հազիւ պիտի բա-
ւեն սովորաւոր աղքատին միմիայն ու
բական չոր հացին, հրաման տուած է
երկրագործական Պանքային որ 2000
ասկիի չափ փոխառութիւն մը ընէ չը-
քաւոր գիւղացիներուն առաջիկայ գար-
նան ցանելիք հոնտին համար, պայ-
մանաւ որ հնձանի ժամանակ գանձուի
այդ գրամը, ու իբր բացառութիւն,
այս անգամ չի գործադրուի նոյն Պան-
քային յատուկ այն մէկ օրէնքը, որ կը
տրամադրէ կալուած կամ մշակելի հո-
ղերը երաշխաւորութեան տակ առնելէ
ետքը ընել փոխառութիւնը:

«Այս մասին Վանայ կառավարիչին
ալ պէտք եղած հրահանգը տրուած է:

«Թէեւ Պոլսոյ հայաթերթերը կը
ջանան համոզել թէ նուրեանի կողմէ ե-
ղած է այս առաջարկը 'ի Պատրիարքա-
րան եւ Պատրիարքն ալ զայն ընդունել
տուած է Պանդային, բայց խոհական ան-

ձինք գիտեն որ նուրեան ուսկից թե-
լագրուած կը շարժի, եւ երկրագործա-
կան Պանքան ոչ թէ նուրեանի կամ
Պատրիարքին պահանջով այլ միմիայն
կառավարութեան հրամանովը կընայ
տուանկ բացառութիւն մը ընել:

«Կաթողիկոսականութեան Վանայ նա-
հանգին մէջ այնչափ շատ հայեր գա-
ւառաւորս ըրած են որ Բ. Դուռը բա-
տկոյուած է միջամտելու:

Բաւական տարիներէ 'ի վեր Պոլսոյ
Պահճէ դարուն լրագիր եւ ջալաճառու-
թիւն ընող Եւգուիայի Խոտխոտունի Պո-
ղոս աղան, որ թէ Պոլսեցի եւ թէ գաւա-
ռացի ազգայնոց շատերուն ծանօթ էր
ու ամենուն համակրանքը կը վայելէր,
Փետր. 15 երկու շաբթի օրը մեռել է
կարճատեւ հիւանդութենէ մը ետքը, ու
մարմինը ամփոփուել է Շիշլիի գերեզ-
մանատունը: Հանդուցեալը, որ ամուսնի
էր, խնայողութեամբը հաւաքած բա-
ւական մէկ դումարը Ազգային Հիւան-
դանոցին կտակել է:

ՆԱԽԱԿ ԽՄԱՍԴՐՈՒԹԵԱՆ

Սիլիսդրէ 22 փետր. 99

«Շարժում» իր 104րդ թիւին մէջ խօսելով մեր իգական վարժարանին նկատմամբ, ծիծաղելի զայրոյթով մը քննադատած էր տեղւոյս Պատ. Հոգաբարձութեան գրած մէկ հերքեմագիրը, առարկելով թէ՛ փոխանակ յայտնելու տեղւոյն ուսուցչուհւոյն ինչ փորձառութեան և հմտութեան տէր ըլլալը, մի քանի բառերով արտաւորած է իւր թղթակցին համետ անունը . . . :

Չարմանալի կէտը սա է թէ, «Շարժում» մինչև ցարդ գրուածներէն տակաւին չէ ըմբռնած որ Հոգաբարձութիւնը ինչ աւտիճանի կարեւորութիւն տուած է իր հրատարակած այդ ստոր գրութեան, որ մինչև իսկ պիտի զիջանի ապացուցանել վարժուհիին տգէտ ու անփորձ չըլլալը :

Սիլիսդրէի հոգաբարձութիւնը յանցաւոր է եղեր, կրթական ծանր ու փափուկ գործը մանկահաս օրիորդի մը յանձնած ըլլալուն համար : Արդեօք հմտութիւնը ու փորձառութիւնը մարդու տարիքին մէջ կը կայանայ թէ ուսուցանելու եղանակին մէջ : Պէտք չէ մոռնալ թէ՛ այդ «մանկահասակը» ի Տօպրիչ պաշտօնավարած միջոցին, ոչմանկահասակի մը թողած ահագին բաջը լրացուցած է, և այդ ալ կարճ ժամանակամիջոցի մէջ : Տօպրիչի ազգայինք կրնան հաստատել զայս :

Շարժումի խմբագրութիւնը պէտք է սա գիտնայ թէ, իր իմաստակ թղթակիցը պաշտպանելու մասին ըրած ճիգերը Սիլիսդրէցիներուն միմիայն ծիծաղը կը շարժեն, այն թղթակցին կրսներ, որուն արժանիքը շատո՞նց քնահաստուած է, և ուրիշ քաղաքներու ազգայինք ալ ծանցան զայն թիւ 96 «Հայերի» հանդէսին մէջ տեսնելով անոր պատկերը :

ԻՐԱԶԵԿ

ՃԻՒԱՂ ՄԸ

Սէրպիլայէն «Արմէնիա»-ի կը գրեն թէ, Կամախի շրջակայներէն Բաղաուիճ ըսուած գիւղէն քանի մը հայ երիտասարդներ կը բնակին եղեր ի Սերպիլա, ուր սրճավաճառութեամբ կը զբաղին : Ասոնց մէջ կայ եղեր նոյն գիւղացի Ա. անուն մէկը, ճիւղալ մը, որ ձեռք անցուցած ճամբորդ խեղճ հայերը կը խափէ, ձեզի գործ պիտի գտնամ ըսելով ունեցած դրամներն կը շորթէ ու յետոյ աստիկանութեան կը մատնէ եղեր, ըսելով թէ, «Հայ մը Պուլկարիաի մէջ շատ մը գողութիւններ ու միջնէ իսկ մարդասպանութիւն ընելէ ետքը հոս փախած է» : Աստիկանութիւնն ալ անմիջապէս կը ձերբակալէ այդ խեղճը, որաւտնց քննութեան կը բանտարկուի եւ կամ սահմանադրութեն դուրս կը վճարուի, լեղու չգիտնալուն պատճառաւ չի կրնալով վիճակը հասկցնել ու ինքզինքը պաշտպանել :

«ՀԱՄԱԿՐՈՂ»Ի ՓԻԼՈՆ

Գիտուած է որ, ամեն անգամ, երբ յեղափոխականի մը իր կռիւմը հակառակ ունեցած մէկ արարքը բնագատուի մասնաւորներու և կամ մամուլին միջոցաւ, անմիջապէս չորս կողմէն պաշտպաններ մէջտեղ կեննեն, բնագատը համոզելու ճիգեր ընելով թէ՛ «այն բնագատուած անձը՝ յեղափոխական չէ, ալ՝ համակրող մը, թէ անոր իր պաշտօնին վերաբերեալ գործոց մասին ըրած խոստովանութիւնն անգամ պէտք է իբր անձնական կարծիք նկատել և այլն» : Այսպէս անցեալ օր ալ, յեղափոխականի մը ունեցած մէկ արարքին մասին տեղ մը խօսակցութիւն մը անցաւ, որ կարծէ հոս արձանագրուի :

— Ինչ կըսէք, հիմա այնինչ մարդը յեղափոխական չէ :

— Ո՛չ, պարզապէս համակրող մըն է :

— Տէր ողորմեա, ոտքով գլխով յեղափոխութեան մէջ գտնուող գործիչին համակրող պիտի ըսենք. «համակրողը՝ գործոն գեր չունեցող բայց յեղափոխութիւնը սիրողին կը սեն:

— Կրնայ այդ անձը գործոն գեր մը ունեցած լլլալ, բայց ոչ թէ յեղափոխական՝ այլ համակրող մը եղած կ'ըլլայ:

— Եւ ո՞ր պարագային յեղափոխական եղած պիտի ըլլայ:

— Այդ չենք գիտեր:

— Զարմանալի բան . . . հիմա դուք յեղափոխական մը չէք:

— Կրնամ եղած ըլլալ կամ ոչ:

— Այդ ի՞նչ շփոթ պատասխան է:

— Այսպէս է. ես կրնամ յեղափոխական եղած ըլլալ կամ ոչ:

— Եղբայր, օրինակի համար, սա Պ. Յ. Ժ. Եանը յեղափոխական է թէ ոչ:

— Կրնայ ըլլալ, բայց չենք գիտեր թէ իսկապէս է:

— Է՛հ, կատակ չուղեր. մարդը Պատրիարքարանը տակնուվրայ ըրաւ ու տարիներով բանտարկուեցաւ. նէ յեղափոխական մը չէր:

— Կարելի է որ էր, բայց որոշ չի գիտցուիր թէ մինչև հիմա անա՞նկ է:

— Ի՞նչ կըսես եղբայր, ադ մարդը երկու խօսքին մէկը ինքզինքին «որ մենք հերոս, որ մենք հերոս» կըսէ կոր նէ, ան ի՞նչ է:

— Ի՞նչ կրնայ ըլլալ, վաղն ալ կիւլայ՝ խողող եմ՝ կըսէ, նայինք անա՞նկ է:

— Է՛յ հիմա աշխիւն անձը որ ՚ի ծնէ յեղափոխական, այն ասպարէզին մէջ մեծցած ու մինչև այսօր գործոն գեր մը ունեցած է նէ՛ յեղափոխական չըսուիր:

— Ես որոշակի ատանկ է չեմ ըսեր:

— Այդ հաշտով, յեղափոխական կոչուած մարդ չունինք մէջերնիս:

— Ունինք, բայց չենք գիտեր թէ որո՞նք են:

— Չէ՛, չունինք պիտի ըսեմ, քանի որ ունենալու մասին փաստ մը չէք ցուցներ մեզի:

— Փաստի պէտք չի կայ. դուք կըսէք թէ այնինչ անձը յեղափոխական է, ես ալ ըրեմ թէ կարելի է եղած ըլլայ, բայց ո՞րչէ գիտցուիր թէ . . .

— Է՛հ, եղբայր, բաւական է. Մոլիէոի Բոնի Ամուսնութիւնը կը ներկայացնենք կոր, որ «կարելի է, հաւանական է, թերեւ կրնայ ըլլալ» ըսելով շփոթ պատասխաններ կուտաս:

— Ճշմարտութիւնը այս է:

— Շիտակը, խնդրեմ չի հասնիր կոր այդ օրինակ ճշմարտութեան. հէ՛ բոժոժիկ, այս բանն բոլոր կարծիքդ ի՞նչ է:

Բոժ. — Իմ կարծիքս սա է որ, եթէ յեղափոխութիւն կայ, յեղափոխական ալ կայ, բայց որովհետեւ ճշմարիտ յեղափոխականը պարտաւոր է խոհուն, հեւատես ու շրջահայեաց ըլլալու, ասոնց մէջ թերացողը՝ հասարակաց բնագոյնութիւնէն օձիքը ազատելու համար՝ «համակրողի անունին կամ փրկոնին տակ կերթայ կը ծածկուի կոր. պարզապէս փախուստի միջոց մ'է այս բանին գործածութիւնը, կը հասկնա՞ք. և ասիկա ալ՝ «Յաղապարտ ձեռնադրութեան յեղափոխականի» անունն օրինաբար մէջ գրուած է, որուն մէկ օրինակը կը խոստանամ յաջորդ թերթով Հայելիի ընթերցողաց ներկայացնել:

ԲԱՆԱՍԵՐ

Հանդես Հնախօսական, Պատմական,
Լեզուաբանական եւ Բնական

որ պիտի հրատարակուի ի Պարիս

յառաջիկայ Մարտ ամսոյ վերջը,

Տնօրինութեամբ Կ. Յ. Բասմաջեանի

եւ աշխատակցութեամբ ազգային և օտար
արեւելագիտաց

Տիար Կ. Բասմաջեան, որ իր Հնախօսական ու Լեզուաբանական խնդրոց վրայ մինչև ցարդ պարբերական հանդէսներու միջոցաւ հրատարակած հատալից գրութիւններովը ծանօթ է բանասիրաց, քաջայոյս եւ թէ պիտի յաջողի այս ձեռնարկին մէջ ալ: Զերմապէս կը յանձնարարենք քաջալերել զինքը:

Բացուած է բաժանորդագրութիւնը՝ հարեկան չորս գրքի համար՝ 20 ֆրանք, ամէն տեղ. իսկ իւրաքանչիւր գիրքն՝ առ նուազն 100 էջէ բաղկացեալ՝ 4 ֆր. 6

Հասցէ. — ՊԱՍՏԱՅԵԱՆ 112, Պարիս
Ռօշըրուստ: Բարիկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԿ

ԵՐ ՈՒ ՀԱՅԵՐ

Թաքու աղբարն ու Մարկոս
Կը կըսէին սար ու փոս .
Վարդէթ եղեր ճարքայ կերթան
Սիրոյ չքայ ճառ կը կարդան :

« Ի՞նչ շատ քան է , մեկ սիրտ հոգի
Ըրալ մընալ հետ իրարի .
Ամեն քարիք աշտ աշխարհի
Մեր գիտին չքայ պիտի քարի » .
Կրտէր Թաքու , աջ կը թռնէր ,
Մարկոսն ալ նորա ճակտէն
Պագ կտանէր մարմնրէն :
Բայ մը կ'ստնէին ,
Կը պըռքէին .
Կը զատնէին , կը խօսէին ,
Նորէն կրկին պագտնէին :

Իրիկուն եղաւ . փառս Իսոյի
Տանը եղան հիւր երկոյի :
Իսոյն գաղտնի հարցոց . — Թաքու ,
Ի՞նչպէս մեկն է ընկերդ Մարկոս — :
— Մի՛ հարցնէր , իշուն մեկն է — :
Յետոյ Իսոյն գաղտնի կը կոչէ ,
Չայն Մարկոսին կը հարցունէ .
Թէ — Թաքուն ի՞նչպէս մեկն է — :
— Չայն մի հասնէր , շանը մեկն է — :

Այլ երբ Իսոյն սեղան կոչեց ,
Ատնց զարմանք եղաւ շահ մեծ ,
Չի երկոյի առջեւ զատ զատ
Դրաւ Իսոյն երկու պնակ ,
Մարկոսինն էր շի չոր խոտով ,
Թաքոսինն էր շի ոսկորով :
Երբ Իսոյն ըսաւ , « հրամանեցե՛ք » ,
Շտա գոչեցին երկու ընկերք ,
« Ի՞նչ , տալ տասան կերակոր մեզ ,
Ըսէ՛ք , Իսո , կը վայելե՛ք » :
— Մի՛ զարմանա՛ք , եղբարք , զատ զատ
Վկայութեանն ճիշդ համեմատ
Չոր էս առի երկոյէն մեր ,
Նոյնը հիմա գործ եմ դրեր » :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ի՞նչ զարմանա՛ք , երբ օտարէն
Կարհամարմինք տընտրեցին .
Չէ՛ որ մեք եմք թուն խկպատճառ
Մեր տնտրութեանն , ո՛վ Հայ եղբարք :

Վ. Վ.

ՀԱՐՑ—ՊԱՏԱՍԽԱՆԻ

Մարդու կեանքը ի՞նչպէս է .
— Արտաւոր ծնիլ , զանգաւանե-
լով ապրիլ և ցաւերով մեռնիլ :
Ի՞նչ է միտքը .
— Երեւոյթութեան ծաղիկը , դա-
տարութիւնն ալ անոր պտուղը :
Ի՞նչ է համբաւն .
— Փափուկ ծաղիկ մը , զոր թեթեւ
շունչ մը կարող է թաւամեցնել :
Ճշմարիտ հաւատարութիւնը ո՛ր կը
գտնուի .
— Գերեզմանին դուռը :
Կենաց դատարարակները որո՞նք են .
— Փորձառութիւն և թշուառ-
թիւն :

Աշխարհիս մէջ ամենէն աւելի հազ-
ուագիւտ բաները որո՞նք են .
— Փափկութիւն , ճաշա՛լ եւ Դա-
տարութիւն :

Թունաւորիչ մարդը ո՞րն է .
— Այն՝ որ քեզի կըսէ թէ աշխա-
տութիւն և խնայողութեան զատ ուրիշ
բանով կրնաս հարստանալ :

Անխորհրդապահ մարդը ինչի՞ կը
համարի .

— Բաց դրքի մէջ , զոր ամեն ոք
կրնայ կարդալ :

ՊՕԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ՎԱՐԺԱՊԵՏՐ

Քրիստոսի աշակերտները՝ Պաւլոս վարժապետներէն աւելի ստակ կը շահէին նոյն իսկ այն տառններն երբ երեք հատ ձուկ ուտելու համար հինգ հազար հոգի մէկտեղ տեղան կը նստէին :

Ամսականը չորս հարիւր զրուշ ԸԼԼալուն պէս՝ ակնոց գործածել կսկսի Պաւսեցի վարժապետը :

Վարժապետներուն համար այն է հոգարար ձուկն ինչ որ է Պիղմոսը Ֆրանսացիի մը համար . դղալ մը ջուրի մէջ կը խղզեն :

Վարժապետին սիւռածն է լոյս , կերածը քոյս , սիրածը կոյս և դրամագլուխը յոյս :

Որքան փնտռես նա խրախոյս ,
Բաղդդ աշխատես կուտայ խոյս :

Իր ամբողջ խելաւն է ձեռք մը նոր հագուստ , մետաքսէ հովանոց մը և արծաթ ժամացոյցին ոսկի շղթայ մը :

Այս փափագով կը մեռնի :

Վարժապետին էն մեծ աւագորդն է կոշիկին ներկը :

Կնկան մը հետ խօսած ժամանակնին կաս կարմիր կը կտրին :

Վարժապետի հետ թուղթ խաղացած ունիք : Հինգ հազար քուէնով պէղիկի քարթի մը սովորաբար 25 վայրկեան կը տեւ . իսկ վարժապետի հետ 2 ժամ և 34 վայրկեան :

Կիրակի օրերը անպատճառ եկեղեցի կերթուն . . . թաղական խորհրդարանէն ներս ակնարկ մը նետելու համար :

Ալեծածան քաղաքը մը ունին որ միփայն իրենց յատուկ է :

Փողկապը շարունակ օծիքէն վեր կը մաշուի :

Ֆրանսերէնի գասեր կուտայ և գաղիանի մը հետ տաճկերէն կը խօսի :

Իրեն համար Վիքթոր Հիւօ ոտանաւոր շինող Աստուած մըն է :

Վարժապետը կառք նստելու համար պէտք է որ թաղին մէջ հարուստի մը յուշարկաւորութիւնը տեղի ունենայ :

Հիմա չեմ գիտեր , բայց իմ ժամանակըս վարժապետ չկար որդւն ոտքերը . . . պերճախօսութիւն չունենային :

Պետական ու եւրոպական վարժարաններու տիմար աշակերտները՝ ազգային վարժարաններու մէջ վարժապետ կը լլան :

Փրկիչը իրենց ասպարէզին հօթել թէնւիկիսն է :

Շատակեր կը լլան , բայց քիչով կապրին :

Աշակերտը «միւսիւ» կըսէ իրեն , թաղականը «պարոն» , տնտեսը «պատուելի» և զոքանը «էֆէնտի» :

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԿԵԱՆԲԷՆ

Թաղական խորհրդարան մը : Կանայ ասուիկն շուրջը երկու երեւաղաներ : Վարժապետը կոճկուելով սեկեակէն ներս կը մտնէ , յետամնաց անհայտաները պահանջելու համար :

Թաղականը .— Ի՞նչ է ան պարոն Սարգիս :

Վարժապետը .— Այս օրուան համար եկուր ըսիք :

Թաղականը .— Ասօր փարա չկայ :

Վարժապետը .— Բայց , էֆէնտի . . . :

Թաղականը .— Չկայ ըսինք ես :

Վարժապետը .— Ձան տէր . . . :

Թաղականը .— Եկող շարաթ տուր , էֆէնտի , անտուկը նեղն է , չի կրցանք հասկըցնել , բայց որով կըսես , մեր վարժապետները գլուխ չունին քի . . . :

Վարժապետը .— Ճիշտ ձեր ամիսներուն պէս :

ՌԱՏԱՄԷՍ

ԽԱԲԵՍԻՈՒԲԵՍԱԿԱՆ

ԸՌԱԽ—ՓԱՆԱԽ ԿԱՆԱԿԱՆ

Գիշ շատ կոկիկ հազուած, 20—25 տարեկան, բարձրահասակ, սև աչքերով ու սրածայր մօրուքով նախկին ինքնակոչ յեղափոխական մը, որ վերջին դէպքերու բերմունքով Պուլկարիա գալով, յաջողած էր բարենպաստակ հաստատութեան մը մէջ գրագրի պաշտօն մը ըստանձնել, առիթը չի փախցունելով նոյն հաստատութեան մէջ աշխատող մի պաշտօնէութեան հետ անոյշ ակնարկներ փոխանակելու և վերջապէս գրաւելու անոր սիրտն ու . . . քսակը, որ արդիւնք խնայողութեան՝ 20—25 տկի չափ դուրս մը կը պարունակէր:

Այս վարպետորդի պարտնը, չունեցած առնելիքները երթալ գանձելու խոստումով բաժնուած էր իր նշանածէն, յուսադրելով զայն թէ քիչ օրէն պիտի վերագառնոր տոպրակներով լեցուն ոսկիներով. ու յետոյ, յետոյ պիտի անցունէին իրենց երջանիկ օրերը թե թեկ պտոյտներ ընելով ամառը գեղեցիկ մարգերուն վրայ, իսկ ձմեռը փառաւոր փառարանի մը առջև. թէ պարտնը պիտի հաստատէր մեծ վաճառատուն մը, գրագիրներով, գրամահաւաք պաշտօններներով, հանձնարներով ու պիտի ձիններով. վերջապէս, իրենց փափաքներուն լի ու լի հատուցում տուող ամեն ինչ պիտի ունենային:

Այսպիսի քաղցր ու փայլուն յոյսեր ներշնչելով իր նշանածին, անոր ձեռքը գտնուած գրամը կը շորթէ եւ շունչը կառնէ իր ծննդավայրը. Փոքր Ասիա, փոխանակ «սարսափ բերեալ համար» (Յ) Մարսէյ երթալու:

Խեղճ օրիորդը տակաւին այն յուսովն է որ խօսեցեալը պիտի վերադառնայ:

Այս պարզ և ճշգրիտ պատմութեամբ նորէն կոչում կընենք մեր կարգ մը հայ օրիորդներուն, որ իրենց գէմը ելնող պարտներուն արտաքին երեւոյթներէն ու շլացուցիչ խոստումներէն չի յափըշտաւուն, որպէսզի վերջ ի վերջոյ յու-

սախափ ըլլալու տխուր հարկին մէջ չի գտնուին, վրայ տալով նաեւ երբեմն իրենց խնայողութեանց արդիւնքը:

Այո՛, պէտք է գիտնան այդ օրիորդները, թէ հիմա մեծ լէգէոն մը կը կազմեն այն կարգ մը չիք երիտասարդները, որոնց տուած խոստումները քիչ յետոյ կը դառնան իր խոստակի:

ԲՈԺՈԺԻԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Առ. Պ. Ա. Մ. — Երկան ըրիք, Պ. Փափազեան ձեր յօդուածը չպիտի հրատարակէ. որովհետեւ դուք ալ մէկ քանիներու ըրածին պէս՝ զայն խմբագրատուն զրկելէ ետքը տակաւին չի հրատարակուած՝ անոր ասոր կարգալով կարեւորութիւնը կորսնցուցած էք:

Զ. Մ. Պուրկալ. — Աստուած շատ քաջիկ չի տայ, պակաս ըլլայ ձեզի պէս բաժանորդը, որ կուզէ հրապարակագրին վրայ ճնշում բանեցնել ու անպաշտպանելին պաշտպանել տալու պայմանաւ անոր բաժանորդագրուիլ:

Դիմեցէք 'ի Թռնովա, ուր Թիմարհանէ:

Դ. Կ. Ֆիլիպէ. — Սխալ դուռ ձեռք առած էք, մենք եւաղմաի ֆապրիքա չունինք, կամ անոր յանձնակատարը չենք որ ձեզի իբր նմոյշ մէկ քանի գանձի իշի եազմա զրկենք: Մերինը՝ թղթէ գրուած (եազմա) է և նմոյշն ալ երկու տարիէ 'ի վեր հրապարակին վրայ կը տեսնուի:

Լ. Մ. — Անցած ըլլայ, նոյն վայրկեանին կը մաղթենք ալ որ խրատ ըլլայ, որպէս զի ուրիշ ատեն երկու կողմերէն մէջ (ըլլան գրագէտ կամ մրագէտ) չի մտնէք ու իրարու հրամցուցած ապտակները անոնց ձեռքէն չի խլէք:

Խ. Մ. Լօմբարտիկա. — Անհոգ եղիք յուսացէք, Սամաթիոյ պատմութիւնը պիտի հրատարակուի՝ հիշինակին մահուանէն ետքը:

ԳՐԱԳԱՆՔ ԳՕՃԱ

ԿԻՆԻՆՆԱԿԻՆԻ ԳՕՄԵՏԻ ՊԻՐ ԲԵՐՏԵ



(ԿԵՅՆՆԱՆ ԵՐԱՆՈՏԱՆ)

Պրիբ. — Կէթիւրաիդին մէքթուպուն իյլահաթընը իսթէրիմ. հէմ չափըդ օլմալը:

Ճիօ. — Պէն իսահաթ միսահաթտան չափամ.

Մատ. — (Կիրերեֆ) Նէ՞ վար. պու Նէ՞ բաթըրուր. Նէ՞ օլույօրսընըլ.

Ճիօ. — Ճանըմ, պու հէրիֆի սի՞ղ մի պուրայա տալէթ իթտինիլ.

Մատ. — Նէյէ՞ ալուրն պուրայա կէթիւրուր.

Ճիօ. — Քիմ կէթիւրուր. քէնտի քէնտինէ կէլմիլ. հայտէ պապա, գաբը աչըդ տըր. ուղուր օլա:

Պրիբ. — Նէ՞ տէմէք, հէմ մէքթուպ կէօնտէրիւրինիլ հէմ տէ գօվարսընըլ, էօյլէ՞ մի:

Մատ. — Սիլ Նէ՞ տէմէք իսթէյօրսընըլ.

Պրիբ. — Նէ՞ տէմէք իսթէյէճէիմ, հիլ պու ալէմտէ իշիաիլմիլ շէյ մի տիւր, էլին էվինէ էթվարընա քեհհեա օլմագ.

Էրբ. — (Իյերսէն) ձիօվաննի. ձիօվաննի.

Ճիօ. — Վալ պիլիմ միւսիւ. իշթէ գօմէտինին բէրաէսի շիմտի աչըլըյօր:

Մատ. — Չաբըդ պուրնու շուրատան տէֆ էտիվէր:

Ճիօ. — Հայտէ տէֆ օլ շուրատան պէ հէրիֆ.

Պրիբ. — Պու իշի աննամատան պիւր հէրէ կիթմիլ.

Էրբ. — (Իյերսէն) ձիօվաննի, ձիօվաննի. իշիթմէյօրմըն.

Ճիօ. — (Պրիֆօյէի իթերեֆ) Հայտէ, շուրաթտան. (Իյերի կիսերեֆ Պրիֆօյէ պասօնումն տերէ սիշիարիւր).

Մատ. — Ահ, պու Նէ՞ պէլա իտի պաշըմըլա կէլուր.

Էրբ. — (Կիրերեֆ) Նէ՞ տէմէք օլուրն. իբի սահաթ տըր ձիօվաննի ի սէսլէյօրմ, ճէվապ պիլէ վէրմէյօր. (Էրֆօյէ իյերի կիրսիյիսէ, մասաւ պասօնումն ալըպ արգասընսա սագրաւ). Նէ՞րէյէ տէֆ օլուպ կիթմիլ.

Ճիօ. — (Կիրերեֆ) Վէ Էրֆօյէի կէօրմէյերեֆ) Գօրգմա մատամ, սագլատըմ, սալ.

Էրբ. — Սագլատըլըն Նէ՞ իմիլ պաղալմ, միւսիւ ձիօվաննի.

— Ճիօ. — (Բէնսի) Այ. շիմտի Նէ՞ ճէվապ վէրմէլի:

Մատ. — Ճանըմ, Նէ՞ օլաճագ. սիզի իշին պիւր քէքիբ գըլարթտըմ ըտը, ձիօվաննի վէրաիմ քիտօլապտա սագլատըն:

Ճիօ. — Էվիլէթ, պէն տէ տօլապտա սագլատըմ. (Բէնսի) ամմա քէքիբ հա, ալթմըլ պէշիբ:

Էրբ. — Օ, օ, մատամ, պու թալր ու հարաքէթինիլէ թաաճիւպ իտէյօրմ, պէսպէլի եէնի պիւր մօտա օլմալը. էօյլէ իբի էլինիլի արգանըլտա թուլթ. մագ. . . աննատըմ, աննատըմ, զէվճէնիլէ պիւր հագարէթ, էօյլէ՞ մի:

Մատ. — Հայըր ճանըմ, Նիշին հագարէթ օլուրն. իշթէ էլիմ, (պու արաւ ձիօվաննի կէօգ իլէ իշմար իսեր, օ սա կէլիւր պասօնումն ալըպ արգասընսա սագրաւ) պու տա օ պիւր էլիմ:

Էրբ. — Նէ՞ պիլէլիմ հա, պէօյլէ պիւր եօլուլըլ շիմտիյէ գատար իթմէմիլ իտինիլ. օնուն իշիւն. . . ալ, պու Նէ՞. . . շիմտի տէ պիլիմ ձիօվաննի. . . պրէ՞ շաշկըն, էօյլէ իբի էլէրին արգանտա, պուտալա կիպի Նէ՞ եիւզիւմէ պագըլօրսըն:

Ճիօ. — Շէյ. . . շիմտի Նէ՞ եաբմալը.

Էրբ. — Կէօթէր շուր էլէրինի.

Ճիօ. — (պիրիսի կէօսթերիւր) Իշթէ միւսիւ.

Էրբ. — Հայըր, իբիսինի պիւրաէն կէօրմէլիյիմ. (ձիօվաննի պասօնումն իբի պաճարն արասընսա կիպէյերեֆ, էյշիւրիսի կէօսթերիւր) Պուլուրըն միւսիւ:

(Տէվաւի)

ԲԱՑՈՒՄԵ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Այգաշին և Չառնշակուն
Շաքարահանդեսի

Գ. ՏԱՐԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՐԴԱՆԱԼ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԾ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ԲՕՂԱԲԻ



ՊՈԼԿԱՎԱՆՈՒԹԵՆԻՆ

Երաշխատուեալ

Ս. ՊԱՐԳԵՒՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տամբեր հրապարակ հանուած
են, որոնց 25,000ը պիտի շահին հե-
տեւեալ կարգաւ.

1898 Դեկտ. 10ին 1500 թիւեր

1899 Յնվր. 7ին 1500 "

" Փետր. 4ին 2000 "

" " 26ին " "

" Մարտ 19ին " "

" Ապր. 12ին 16,000 "

Մէկ ութերորդ տոմսակին գինն է,
Ոսկի Լէվ Սթ.

Ա. ամսոյ համար	1	25
Բ. " "	1	75
Գ. " "	2	87 1/2
Դ. " "	3	62 1/2
Ե. " "	2	87 1/2
Զ. " "	2	2 1/2

14 40

Ատենցմէ զատ կը գտնուին նաև քա-
ռորդ, կէս և ամբողջ տոմսեր, որոնց ար-
ժէքները համեմատաբար կաւելնան.

Կենդան և մանրամասն տեղեկու-
թեանց համար պէտք է գիմել տեղանա-
ւոր Տ. Սարգիս Դարբինէլեանի, Վառնա,

Մասաչուս.

“ՄԻՈՒԹԻՒՆ”

Ատենէ մը ի վեր զադարման զա-
տապարտուած յիշեալ կիսամսեայ թեր-
թը վերսկսած է հրատարակուիլ փետ.
1էն սկսեալ:

Տարեկանն է 4 ֆրանք, վեցամսեան
2 ֆրանք, կանխիկ:

Հայաշատ քաղաքներու մէջ կը ծախ-
ուի հասար 10 տանգիլով:

Հասցէ. — Մ. Աշտարակ

Բօսք ռեսպանքաճք Արին (Կոնս)

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Գ

Հանդիսարան 57րդ Տարի

Ճոխ և օգտաշատ պարունակութեամբ

Տարեկանն է 10 ֆր. — 4 րուպլի.
2 անգար:

Հասցէ

Ռեսսաֆսիօն ՏԵ ՂԱ ՌԵՎԻՍ Պապուկեայ

Սէն Լազար

(Իթուլի)

Վէնիս

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ”

Ուսումնաքերք

Տարեկան 10 ֆր. ոսկի, վեցամսեայ 6 ֆր.

կանխիկ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ—Գրական յօդուածներէն զատ՝ ճըշ-
դիւ տեղեկութիւն կը տրուի հայ—գրակա-
նութեան, պատմութեան, ևայլն նկատմամբ
ամէն ամիս ելած նոր հրատարակութեանց
վրայ: Նոյնպէս քննադատական տեղեկու-
թիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տըպ-
ուած կարեւոր լրերու վրայ:

“Ազգային լրագրաց բովանդակութիւն ու
թղթակցութիւն, ծանուցում, ևայլն:

Խմբագրութեան զրկուած ամին զրքի-
ւու վրայ՝ քննադատական համառօտ տեղե-
կութիւն տալը պիտի շարունակուի:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ

Печатница “Взаимность”, — Варна.